



e-Guillotine ՇՏԵՄԱՐԱՆ

ՀԱՃԱԽ ՏՐՎՈՂ ՀԱՐՑԵՐ

- ← Ինչ է e-Guillotine-ը:
- ← Ո՞ւմ համար է նախատեսված շտեմարանը:
- ← Ինչո՞ւ է անհրաժեշտ գրանցվել:
- ← Ինչպե՞ս գրանցվել:
- ← Ինչ անել, եթե մոռացել եմ գաղտնաբառը:
- ← Ինչպե՞ս փոխել գաղտնաբառը:
- ← Ինչպե՞ս է աշխատում փնտրման համակարգը:
- ← Ինչպե՞ս կարելի է օրենսդրական բարեփոխումների առաջարկներ ներկայացնել:
- ← Ի՞նչ է իրավական ակտի վերանայման ստուգաթերթը:
- ← Ինչպե՞ս լրացնել իրավական ակտի վերանայման ստուգաթերթը:
- ← Որտե՞ղ է իմ լրացրած ստուգաթերթը կամ իմ թողած առցանց հաղորդագրությունը:
- ← Ի՞նչ է ֆորումը եւ ինչպե՞ս է այն աշխատում:
- ← Ա՞յլ խնդիրներ...

← Ինչ է e-Guillotine-ը:

e-Guillotine-ը բիզնես գործընթացների եւ դրանք սահմանող իրավական ակտերի առցանց շտեմարան է:

← Ո՞ւմ համար է նախատեսված շտեմարանը:

e-Guillotine-ը նախատեսված է իրավական համակարգը վերանայողների, բիզնես հանրության եւ լայն հասարակության համար: Նրանցից յուրաքանչյուրը կարող է իր կարեւոր ներդրումն ունենալ Հայաստանի օրենսդրական կարգավորիչ դաշտի բարելավման գործում:

← Ինչո՞ւ է անհրաժեշտ գրանցվել:

Թեեւ շտեմարանում տեղադրված ողջ տեղեկատվությունը բաց է հասարակության համար, կայքում գրանցված օգտատերերը հնարավորություն են ստանում՝

- մեկնաբանել իրավական ցանկացած ակտ՝ համապատասխան ստուգաթերթի միջոցով,
- մասնակցել ֆորումին:



← **Ինչպե՞ս գրանցվել:**

Կայքում գրանցվելու համար անհրաժեշտ է՝

- սեղմել «Գրանցվել»՝ կայքի վերելի աջ անկյունում,
- լրացնել համապատասխան դաշտերը,
- հետեւել նախանշված էլ. փոստով ստացված նամակի հղմանը եւ ակտիվացնել հաշիվը:

← **Ինչ անել, եթե մոռացել եմ գաղտնաբառը:**

Նոր գաղտնաբառ ստանալու համար համապատասխան էջում (<http://www.e-guillotine.am/user/forgotpassword>) լրացնել Ձեր այն էլ. փոստի հասցեն, որով գրանցվել էք, սեղմել «Նոր գաղտնաբառ ստեղծել» կոճակը եւ էլ. փոստին ստացված նամակից վերցնել նոր գաղտնաբառը:

← **Ինչպե՞ս փոխել գաղտնաբառը:**

Գաղտնաբառը փոխելու համար անհրաժեշտ է՝

- մուտք գործել համակարգ
- այցելել «Իմ պրոֆիլը» էջը
- սեղմել «Փոխել գաղտնաբառը» կոճակը եւ լրացնել հին ու նոր գաղտնաբառերը:

← **Ինչպե՞ս է աշխատում փնտրման համակարգը:**

Իրավական ակտ կամ բիզնես գործընթաց փնտրելու համար անհրաժեշտ է համապատասխան դաշտում մուտքագրել անվանումը կամ առնչվող հիմնաբառերը՝ վերջում ավելացնելով *:
Իրավական ակտ փնտրելիս կարելի է մուտքագրել նաեւ իրավական ակտի համարը:

← **Ինչպե՞ս կարելի է օրենսդրական բարեփոխումների առաջարկներ ներկայացնել:**

Օրենսդրական բարեփոխումների առաջարկներ ներկայացնելու մի քանի եղանակ կա՝

- ցանկացած իրավական ակտի համար Իրավական ակտի վերանայման ստուգաթերթ լրացնել,
- ցանկացած իրավական ակտի կամ բիզնես գործընթացի վերաբերյալ առցանց հաղորդագրություն թողնել,
- մասնակցել ֆորումի քննարկումներին:



← **Ի՞նչ է իրավական ակտի վերանայման ստուգաթերթը:**

Իրավական ակտի վերանայման ստուգաթերթը հարցաթերթիկ է, որը գրանցված օգտատերերը կարող են լրացնել ցանկացած իրավական ակտի համար:

← **Ինչպե՞ս լրացնել իրավական ակտի վերանայման ստուգաթերթը:**

Լրացնելու համար անհրաժեշտ է՝

- օգտատիրոջ անունով եւ գաղտնաբառով մուտք գործել համակարգ,
- ընտրել իրավական ակտը,
- այցելել «Մեկնաբանություններ» բաժինը
- սեղմել «Լրացրեք իրավական ակտի վերանայման ստուգաթերթը» կոճակը
- լրացնել եւ սեղմել «Ուղարկել եւ դուրս գալ» կոճակը:

Իրավական ակտի վերանայման ստուգաթերթի ուղեցույցը տեղադրված է www.e-guillotine.am կայքի առաջին էջում:

← **Որտե՞ղ է իմ լրացրած ստուգաթերթը կամ իմ թողած առցանց հաղորդագրությունը:**

Յուրաքանչյուր ստուգաթերթ կամ առցանց հաղորդագրություն կայքում հայտնվում է համապատասխան իրավական ակտի «Մեկնաբանություններ» բաժնում՝ Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոնի կողմից հաստատվելուց հետո:

← **Ի՞նչ է ֆորումը եւ ինչպե՞ս է այն աշխատում:**

e-Guillotine ֆորումը քննարկումների հարթակ է: Ֆորումին մասնակցելու համար անհրաժեշտ է օգտատիրոջ անունով եւ գաղտնաբառով մուտք գործել համակարգ: Ձեր հաղորդագրությունը ֆորումի էջում կհայտնվի Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոնի կողմից հաստատվելուց հետո:

← **Ա՞յլ խնդիրներ...**

Եթե վերոնշյալով չպատասխանեցինք Ձեր հարցին, դիմեք մեզ՝
(+374 10) 53 13 25, hotmail@regulations.am: